ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարաևրվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի /18 դասաժամ/ թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև1 /:

Փաստաթուղթ / դիպլոմ /՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համապատասխան որակավորման վերաբերյալ,

2. Անձնագրի պատճենը
3. Ինքնակենսագրություն /Ձև 4/
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում /,
5. Մեկ լուսանկար 3Х4 չափի,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **հոկտեմբերի 10-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերին:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 12-ին՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Նոր Հաճնի N 1 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Նոր Հաճն, Չարենցի 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ / 0224 / 4-27-58 կամ /091/ 94-23-97 հեռախոսահամարներով: